երկրագործ Հայ ժողովրդի ազի արցունքները սրբել և դիւթական գաւազանի մի հարուածով անվերջ չարիքները վերացնել ու նրանց բարեբութիւն և երջանկութիւն պարգևել, մեր տկար ոյժերից շատ ու շատ վեր բաներ են։ Ապա ուրեմն երկու չարիքներից փոքրագոյնը պիտի ընտրել։ Այդ դժբաղդ ժողովրդին վերահաս թշուառութեանց մաշող ճիրաններից փրկելու համար ես առաջարկում եմ հետևեալ կտրուկ միջոցները։ Նախ՝ բանալ երկդասեան դպրոցներ, երկրագործական և գիւղատնտեսական բաժանմունքներով, որ գիւղացու երեխան կարողանար մի թեթև գաղափար կազմել գիւղատնտեսութեան տարրական գիտելիքների մասին։ Երկրորդ՝ գիւղատնտեսութեան վերաբերեալ, ուժասպառ և նիհարացած հողերը պարարտացնելու, նորագոյն գործիքներով մշակելու եղանակի, եղջիւրաւոր անասունների և պտղատու պէսպէս ծառերի աղնուացման և զարգացման մասին դասախօսութիւններ կարդալ երկրագործ ժողովրդին հասկանալի—Ուտիերէն, Հայերէն և Թուրքերէն լեզուներով։ Երրորդ՝ ցոյց տալ նրանց (գիւղացիներին) երկրագործութեան և գիւղատնտեսութեան վերաբերեալ պէսպէս կատարելագործուած գործիքներ և բացատրել նրանց գործածութեան եղանակը։ Չորրորդ՝ կազմել «սպառող» և «արտադրող» ընկերութիւններ *)՝ մեծ և

---

*) «Մշակի» 1903 թ. 199—200 և 202-րդ համարների բանասիրական բաժնում յարգելի պ. Ե. Թոփչեանը «Օգտակար կազմակերպութիւններ» խորագրի տակ մի շարք